տակաց, և յետոյ կացին յամրաստանութենէ իւրեանց։ Եւ դատաւորն հրաման եւ փախանորդաց երից, ախրել իւրաքանչիւր ազգաց բաժնի իւրում. ՌՁՌ (1680)։

Իսկ Յակոբ Կաթուղիկոս լուեալ զանցս Հայոց եղելոց 'ի Կոստանդինուպոլիս, ցաւակից լինէր հոգւով չափ տարաբախտ վիճակի հօտին իւրոյ. կամեցաւ դարման մատուցանել այսմ ամենայնի, և ոչ հայեցեալ 'ի ծերութիւն իւր՝ ել յԷջմիածնէ և ճանապարհ տարաւ միւսանգամ 'ի Կոստանդինուպոլիս։ Եւ հասեալ անդր յամսեանն Դեկտեմբերի (1679), գրեաց անտի թուղթ սիրոյ առ Եղիազար յամսեանն Յունվարի, և ասէ. սիրեցեալդ իմ 'ի Քրիստոս պատուական եղբայր, հայեաց եւ աղեխորով լեր 'ի վերայ թշուառութեան մերոյոց՝ որք կան 'ի թագաւորական քաղաքիս. զի և դու մասամբ իւիք եղեր պատճառ ցաւոցս այսոցիկ. եկ այսր և խորհուրդ արարեալ գոցուք զելս հնարից յօգուտ ազգին։ Եւ Եղիազար թէպէտեւ յօժարեցաւ գնալ, բայց յամեալ փոքր մի գրեաց պատասխանի առ Յակոբ Կաթուղիկոս, և ասէ. մերձեալ են աւուրք աղուհացից և կայ առաջի տօն Զատկի և ժողովեալ են ատ ուխտաւորք բազումք, որք ոչ թողուն ելանել ինձ ատի նախ քան զտօն Ս. Յարութեան, վասն որոյ խնդրեմ ներել դանդաղանացս։ Եւ Յակոբ Կաթուղիկոս երկայնամտեալ զտեղի կալաւ 'ի Կոստանդինուպոլիս։

Յայնժամ մատուցեալ Երեմիա Զէլէպի առ Յակոբ Կաթուղիկոս՝ յորդորեաց զնա առաքել զՄարտիրոս վարդապետ յԵրուսաղէմ հանդերձ յանձնարարական թղթով՝ զի գնացեալ անդր՝ հաշտեսցի ընդ Եղիազարու եւ հանդարտեսցի. և 'ի դարձին նորա՝ եթէ կամեսցի՝ եկեսցէ ընդ նմա 'ի Կոստանդինուպոլիս։ Եւ 'ի հաւանիլ Կաթուղիկոսին, հաճեալ և Մարտիրոսի՝ ել և գնաց յԵրուսաղէմ, և Եղիազար սիրով ընկալաւ զնա, և ետ նմա առանձին տեղի բնակութեան 'ի դարպասի։ Յետ քանի մի աւուրց նուիրեցան ոմանք ձեռնադրիլ Եպիսկոպոս յԵղիազարէ իբրեւ 'ի Կաթուղիկոսէ իւրեանց. իսկ Եղիազար ասէ ցնուիրեալսն. գնացէք ասացէք Մարտիրոս վարդապետին, զի եկեալ աղաչեսցէ զվասն ձեր, եւ յայնժամ ձեռնադրեցից զձեզ։